**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

---

**25 մայիս 2016 թվականի թիվ 44**

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի ԹԻՎ 07 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի մայիսի 25-ի թիվ 07 արտահերթ նիստի օրակարգը:

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 82-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2.<<Հայջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով անհատույց գույք հանձնելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 մայիս 2016 թվականի թիվ 45-Ն**

## ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 82-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդհոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 10-ի <<Ծաղկաձոր քաղաքի 2016 թվականի բյուջեի հաստատման մասին>> թիվ 82-Ն որոշման հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Բաժին 5 խումբ 6 դաս 1 (Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)հոդված 4511(Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) 2100.0 թիվը փոխարինել 2650.0թվով":

2) Բաժին 6 խումբ 6 դաս 1 (Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) "38800.0 թիվը փոխարինել 37800.0 թվով":

3) Բաժին 8 խումբ 1 դաս 1 (Հանգստի և սպորտի ծառայություններ) հոդված 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) "804.0 թիվը փոխարինել 754.0 թվով":

4) Բաժին 8 խումբ 1 դաս 1 (Հանգստի և սպորտի ծառայություններ) հոդված 4637 (Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) "500.0 թիվը փոխարինել 0.0 թվով":

5) Բաժին 8 խումբ 1 դաս 1 (Հանգստի և սպորտի ծառայություններ) հոդված 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) "0.0 թիվը փոխարինել 1000.0 թվով":

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 մայիս 2016 թվականի թիվ 46-Ն**

<<ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով,72-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, ինչպես նաև համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Նոտարական վավերացում չպահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 1851-Ն որոշման՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը սեփականության իրավունքով անհատույց հանձնել «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. **Գույքի գտնվելու վայրն է՝** Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք:

| **Գույքի ծածկագիրը(Վկայականի համարը)** | **Գույքի մակերեսը** | **Գույքի նպատակային նշանակությունը** |
|---|---|---|
| Վկայական N 2564855 | 5871,8 գծ/մ D=100մմ | ջրահեռացման խողովակաշար |
| Վկայական N2564857 | 1436,7 գծ/մ D=400մմ | կոլեկտոր |
| Վկայական N2564854 | 8325,2 գծ/մ D=100մմ | խմելու ջրի ջրատար |

| | | |
|---|---|---|
| Վկայական N2564859 | 4884 գծ/մ<br><br>D=100մմ | ջրատար |
| Ծածկագիր՝<br>07.005.0026.0449<br><br>Վկայական N2564860 | 800քմ | կարգավորիչ ջրամբար |
| Ծածկագիր՝<br>07.005.0023.0043<br><br>Վկայական N2564858 | 1561քմ | կարգավորիչ ջրամբար |
| Ծածկագիր՝<br>07.005.0026.0451<br><br>Վկայական N 2564856 | 1200քմ | կարգավորիչ ջրամբար |
| Ծածկագիր՝<br><br>07.005.0026.0450<br><br>Վկայական N2564861 | 900քմ | կարգավորիչ ջրամբար |

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2013 թվականի մարտի 21-ի <<Ծաղկաձոր քաղաքի խմելու ջրի եվ կոյուղու համակարգերը <<Հայջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց օգտագործման հանձնելու մասին>> թիվ 22-Ն որոշումը:

4.Համայնքի ղեկավարին՝ <<Հայջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ